Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1985 - Ն որոշման

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԴԵՂԱՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. Առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում հօգուտ ապահովագրված անձանց ապահովագրական փաթեթի տրամադրումը ապահովելու համար Հիմնադրամը իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություններ) հետ պայմանագրային հարաբերությունները հաստատում է հրապարակային օֆերտայի և դրա ակցեպտի արդյունքում կնքված պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագիր) հիման վրա:
2. Պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվում են Կառավարության կողմից և հրապարակվում Հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայքէջում:
3. Պայմանագրեր կարող են կնքվել այն կազմակերպությունների հետ, որոնք բավարարում են Կառավարության որոշմամբ սահմանված և Հիմնադրամի կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված պայմանագիր կնքելու նվազագույն պահանջները (այսուհետ նաև՝ հրապարակային օֆերտայի պայմաններ կամ նվազագույն պահանջներ):
4. Պայմանագիր կնքելու համար դիմող կազմակերպությունների և Հիմնադրամի միջև պայմանագրային հարաբերությունները, ի թիվս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ դրույթների, կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 30-րդ գլուխներով: Կազմակերպության ակցեպտը պետք է պարունակի համաձայնություն Հիմնադրամի կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված հրապարակային օֆերտայի պայմաններն ամբողջությամբ և անվերապահորեն ընդունելու և հրապարակային օֆերտային պայմանները բավարարելու և դրանց համապատասխան ապահովագրական փաթեթը տրամադրելու մասին:
5. Հրապարակային օֆերտայի պայմանների ապահովումը գնահատելու նպատակով կազմակերպությունը հրապարակային օֆերտայում սահմանված ժամկետում, կարգով և ձևով լրացնում և ներկայացնում է ակցեպտը, ինչպես նաև ակցեպտում նշված պայմանների գնահատման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերը կամ տեղեկատվությունը, որոնց ցանկը ևս սահմանվում է հրապարակային օֆերտայում:
6. Կազմակերպությունն ակցեպտը՝ կից փաստաթղթերով հանդերձ, էլեկտրոնային եղանակով ուղարկում է Հիմնադրամի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ հրապարակային օֆերտայի պայմանագիր կնքելու վերաբերյալ հրապարակված հայտարարությամբ սահմանված ժամկետներում: Այն դեպքում, երբ կազմակերպությունը գործունեություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տարբեր համայնքներում կամ մարզերում, ակցեպտը և դրան կից փաստաթղթերը ներկայացվում են առանձին՝ ըստ գործունեության իրականացման վայրերի: Տարվա ընթացքում ներկայացվող նոր ակցեպտները (այդ թվում՝ ի լրումն նախկինում ներկայացված

ակցեպտների) դիտարկվում են սույն կարգով սահմանված ակցեպտների դիտարկման կարգին և ժամկետներին համապատասխան:

7. Կազմակերպության ակցեպտը Հիմնադրամ մուտքագրվելու օրվանից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում չմերժվելու դեպքում Պայմանագիրը համարվում է կնքված, և կազմակերպության անվանումը ներառվում է Հիմնադրամի կողմից հաստատվող Ապահովագրական փաթեթի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, դեղերի տրամադրում իրականացնող կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ ցանկ): Դիմումը մերժվում է Հիմնադրամի կողմից՝ Կառավարության կողմից սահմանած նվազագույն պահանջները չբավարարելու դեպքում:

8. Այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել հրապարակային օֆերտայի պայմանների հետ կապված լրացուցիչ հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ փաստաթղթեր՝ ցանկում ներառելու որոշման կայացման ժամկետը երկարաձգվում է հիմնավորման և փաստաթղթերի մուտքագրման օրվանից սկսած՝ 20 աշխատանքային օր ժամկետով:

9. Կազմակերպությունը ապահովագրական փաթեթ տրամադրելու համար նախատեսված կազմակերպությունների ցանկում ներառվում է անժամկետ՝ մինչև Պայմանագրի լուծումը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված դեպքերում պայմանագրային հարաբերությունների դադարումը:

10. Կազմակերպությունը կարող է ցանկից դուրս գալու դիմում ներկայացնել ցանկում ընդգրկվելուց առնվազն 3 ամիս հետո: Կազմակերպությունը ցանկից դուրս է գալիս դիմումը Հիմնադրամ մուտքագրվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ցանկից դուրս գալուց առաջ կազմակերպությունը Հիմնադրամին է ներկայացնում տվյալ պահին ապահովագրական փաթեթի ստացումը դեռ չավարտած ապահովագրված անձանց ցանկը՝ հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով: Ցանկում ներառված կազմակերպությունները յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ից 20-ը պետք է Հիմնադրամ ներկայացնեն Կառավարության կողմից սահմանված նվազագույն պահանջների ապահովման նպատակով պահանջվող տեղեկատվությունը՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, նվազագույն պահանջների ապահովումը և հաջորդ տարվա համար պայմանագիրն ուժի մեջ թողնելու հարցը հաստատելու նպատակով:

11. Տարվա ընթացքում պայմանագրով նախատեսված որևէ պայմանի՝ այդ թվում նվազագույն պահանջների ցանկացած փոփոխության դեպքում, կազմակերպությունը պետք է Հիմնադրամին ներկայացնի նոր դիմում, որը դիտարկվում է որպես նոր դիմում և որին ընթացք է տրվում սույն որոշմամբ սահմանված ընդհանուր կարգով:

12. Հրապարակային օֆերտայի պայմանների գնահատումը բժշկական կազմակերպությունների դեպքում իրականացվում է Հիմնադրամի գլխավոր տնօրենի կողմից սահմանված պատասխանատու ստորաբաժանման/ստորաբաժանումների կողմից՝ ըստ ակցեպտների ստացման հաջորդականության՝ սույն որոշման հավելված 2-ով սահմանված, ակցեպտին կից ներկայացված պահանջների, դրանցում նշված ցուցանիշների վերաբերյալ տվյալների ամբողջականության, դրանց ապահովմանը համապատասխան:

13. Հրապարակային օֆերտայի պայմանների գնահատումը դեղատների դեպքում իրականացվում է Հիմնադրամի գլխավոր տնօրենի կողմից սահմանված

պատասխանատու ստորաբաժանման/ստորաբաժանումների կողմից՝ ըստ ակցեպտների ստացման հաջորդականության՝ սույն որոշման հավելված 3-ով սահմանված պահանջների հիման վրա, գնահատողական ցուցանիշների հիման վրա՝ առանց տեղում մշտադիտարկում իրականացնելու:

14. Հրապարակային օֆերտայի պայմանների գնահատումը բժշկական կազմակերպությունների դեպքում իրականացվում է ըստ ընդհանուր և լրացուցիչ պայմանների: Հրապարակային օֆերտայի լրացուցիչ պայմանների գնահատումն իրականացվում է ըստ ակցեպտում նշված բժշկական օգնության և սպասարկման տեսակի առանձին ծառայությունների մասով սահմանված լրացուցիչ պայմանների: Լրացուցիչ պայմանների գնահատումն իրականացվում է ընդհանուր պայմանների գնահատման հետ միասին, սակայն դրանց գնահատականը չի կարող հիմք ընդունվել ընդհանուր պայմանների գնահատման համար, այլ կարող է ազդել միայն բժշկական կազմակերպության կողմից բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի առանձին ծառայությունների մասով կայացման ենթակա որոշման վրա:

15. Բժշկական կազմակերպությունների դեպքում լրացուցիչ պայմանների գնահատման ցուցանիշներն ըստ արդյունքների կարող են լինել գնահատողական և դիտարկման: Դիտարկման պարագայում իրականացվում է տեղում մշտադիտարկում՝ սահմանված պայմանների առկայությունը պարզելու նպատակով, իսկ գնահատողականի դեպքում՝ իրականացվում է կից ներկայացված փաստաթղթերի, տեղեկությունների փաստաթղթային ուսումնասիրություն:

16. Բժշկական կազմակերպությունների դեպքում՝ հրապարակային օֆերտայի պայմանների գնահատման արդյունքում սահմանված ցուցանիշների ընդհանուր թվի կեսից ավելի դրական արդյունքի դեպքում, իսկ դեղատների դեպքում՝ ընդհանուր պայմանների 90 տոկոսը բավարարելու դեպքում կազմակերպության ակցեպտը բավարարվում է, կայացվում է պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում և կազմակերպության անվանումն ընդգրկվում է ապահովագրական փաթեթի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, դեղերի տրամադրում իրականացնող կազմակերպությունների ցանկում:

17. Բժշկական կազմակերպությունների դեպքում հրապարակային օֆերտայի պայմանների գնահատման արդյունքում ցուցանիշների ընդհանուր թվի կեսից ավելի բացասական արդյունքի դեպքում, իսկ դեղատների դեպքում՝ ընդհանուր պայմանների 90 տոկոսը չբավարարելու դեպքում՝ կազմակերպության ակցեպտը մերժվում և կայացվում է պայմանագիր չկնքելու վերաբերյալ որոշում:

19. Կազմակերպության կողմից ներկայացված ակցեպտի քննարկման արդյունքներով ընդունված որոշման մասին կազմակերպությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ստանում է իրազեկում այն էլեկտրոնային փոստի միջոցով, որով ներկայացվել էր ակցեպտը:

19. Բժշկական կազմակերպությունների դեպքում՝ որոշմանը կցված լրացուցիչ պայմանների գնահատման ցուցանիշների արդյունքների հիման վրա, հաշվի առնելով բժշկական կազմակերպության կողմից ներկայացված ակցեպտում նշված տեղեկությունների արժանահավատության գնահատման համար իրականացված մշտադիտարկման արդյունքները, կարող են կիրառվել հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցներ:

20. Կայացված որոշումների հետ անհամաձայնության դեպքում դրանք կազմակերպության կողմից ներկայացվում են Հիմնադրամին էլեկտրոնային եղանակով՝

ստացումից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ կցելով համապատասխան մեկնաբանությունները: Կրկնակի քննարկումից հետո պայմանագիր կնքելու կամ չկնքելու վերաբերյալ կայացված որոշումներն այլևս ենթակա չեն հետագա քննարկման և կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Կազմակերպությունը կարող է ներկայացնել նոր ակցեպտ միայն մերժման հիմք հանդիսացած հիմքերի վերացման մասին Հիմնադրամին պատշաճ տեղեկացնելուց, դրանց հավաստող տվյալները ներկայացնելուց և Հիմնադրամի կողմից դրանց մշտադիտարկումն իրականացնելուց հետո (միայն բժշկական կազմակերպությունների դեպքում), սակայն ոչ շուտ, քան ակցեպտի մերժմանը հաջորդող 3 ամիս անցնելուց հետո:

19. Ակցեպտի բավարարման որոշումը հիմք է տվյալ կազմակերպության (ի դեմս իրավասու անձի) հետ պայմանագիր կնքելու համար:

23. Ակցեպտի վերաբերյալ կայացված որոշումը վերանայվում է՝

1) Հիմնադրամի գլխավոր տնօրենի կողմից, եթե ընթացիկ տարում մշտադիտարկումներ, դիտարկումներ, փորձագիտական և համանման այլ աշխատանքներ իրականացնող պատասխանատու ստորաբաժանումներն իրենց լիազորությունների շրջանակներում հայտնաբերել են ակցեպտը մերժելու համար հիմք հանդիսացող փաստեր և դրանք ներկայացվել են Հիմնադրամի գլխավոր տնօրենին կամ Հիմնադրամի կողմից որպես պայմանագրի կողմ իրականացրած դիտարկումների, մշտադիտարկումների, փորձագիտական և համանման այլ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են սույն կարգով սահմանված ակցեպտը մերժելու համար հիմք հանդիսացող փաստեր,

2) պայմանագիր կնքելու մասին արդեն իսկ ընդունված որոշման վերանայման պահանջի կամ այնպիսի տեղեկատվության հիման վրա, որը ևս կարող է հիմք ծառայել որոշման վերանայման համար՝ ներկայացված հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների, իրավապահ մարմինների կամ այլ իրավասու անձանց կողմից:

24. Ակցեպտների ուսումնասիրության արդյունքներով պայմանագիր կնքելը մերժելու վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ